**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ**
**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«18» «դեկտեմբերի» 2023թվական N 3165 - Ա

## ՔԱՂԱՔԱՑԻ՝ ՕՖԵԼՅԱ ՍԵՅՐԱՆԻ ՍՈՒԼԹԱՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

### 1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար՝ Վարդգես Սամսոնյանս, վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 275-րդ հոդվածով սահմանված կարգով, վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննության նախապատրաստելով, ղեկավարվելով Օրենսգրքի 219.1 հոդվածով, 2023թվականի դեկտեմբերի 15-ին Գյումրի քաղաքում, դռնբաց վարույթի ընթացքում, քաղաքացի՝ Օֆելյա Սեյրանի Սուլթանյանի («ԱՅՈՍ» ՍՊԸ-ի հիմնադիր) բացակայությամբ, ով պատշաճ ծանուցվել է, սակայն չի ներկայացել հարուցված վարչական վարույթի լսումներին, բացի այդ ծանուցագիրը տեղադրվել է նաև ՀՀ ինտերնետով պաշտոնական ծանուցման կայքում, Օրենսգրքի 277-րդ հոդվածով սահմանված ժամկետների պահպանմամբ, 248-րդ հոդվածով սահմանված սկզբունքներով և 278-279-րդ հոդվածներով սահմանված կարգով, քննելով Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ինքնակամ շինությունների և հողի վերահսկողության բաժնի աշխատակիցների կողմից 2023 թվականի նոյեմբերի 23-ին կազմած քաղաքացի՝ Օֆելյա Սեյրանի Սուլթանյանի կողմից Օրենսգրքի՝ 154-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը, պարզեցի.

### 2. ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ինքնակամ շինությունների և հողի վերահսկողության բաժնի աշխատակիցներն իրենց պաշտոնական պարտականությունները կատարելիս 2023 թվականի նոյեմբերի 23-ին հայտնաբերել և Օրենսգրքի 9-րդ, 251-րդ, 254-րդ և 255-րդ հոդվածներով սահմանված կարգով կազմել են քաղաքացի՝ Օֆելյա Սեյրանի Սուլթանյանի կողմից Օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին

մասով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ արձանագրություն և նրան կցել թվով 3 լուսանկարներ:

2023թվականի նոյեմբերի 23-ին բացահայտվել և տեղում արձանագրվել է, որ քաղաքացի՝ Օֆելյա Սեյրանի Սուլթանյանը Գյումրի քաղաքի Երևանյան խճ., թիվ 183/1 հասցեում, որը սեփականության իրավունքով պատկանում է «ԱՅՈՍ» ՍՊԸ-ին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 1407006 վկայական, տրված 04.09.2005թ.-ին), չունենալով համապատասխան շինարարական թույլտվություն, ինքնակամ շինարարական աշխատանքներ է իրականացրել, այսինքն կատարել է վարչական իրավախախտում, որը նախատեսված է Օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով:

Քաղաքացի՝ Օֆելյա Սեյրանի Սուլթանյանի կողմից վարչական իրավախախտում թույլ տալու հանգամանքները ապացուցված են 2023 թվականի նոյեմբերի 23-ին պատշաճ կարգով կազմված արձանագրությամբ և նույն օրը կատարված լուսանկարներով, որտեղ հստակ երևում է, որ վերոնշյալ հասցեում կատարվել են ինքնակամ շինարարական աշխատանքներ, առկա է ինքնակամ շինություն:

Ի նկատի ունենալով վերոգրյալը ամբողջությամբ հաստատված եմ համարում, որ քաղաքացի՝ Օֆելյա Սեյրանի Սուլթանյանը թույլ է տվել վարչական իրավախախտում, որը նախատեսված է Օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով և առկա չէ Օրենսգրքի 247-րդ հոդվածով սահմանված՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը բացառող որևէ հանգամանք:

## 3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Ղեկավարվելով Օրենսգրքի՝ 23-րդ հոդվածի 2-րդ կետի, 32-րդ, 37-րդ, 281-րդ, 282-րդ հոդվածի 1-ին կետի, 283-րդ, 286-287-րդ, 298-րդ, 305-րդ և 154-րդ հոդվածի 1-ին մասի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի, 88-րդ հոդվածի, «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Քաղաքացի՝ Օֆելյա Սեյրանի Սուլթանյանին ենթարկել վարչական պատասխանատվության, նշանակելով տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի՝ 500.000 (հինգ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով:

2. Պարտավորեցնել քաղաքացի՝ Օֆելյա Սեյրանի Սուլթանյանին որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում, իր միջոցների հաշվին վերացնել ինքնակամ շինարարության հետևանքները:

3. Որոշման օրինակը 3-օրյա ժամկետում ուղարկել քաղաքացի՝ Օֆելյա Սեյրանի Սուլթանյանին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի քաղաքացի՝ Օֆելյա Սեյրանի Սուլթանյանին պատշաճ իրազեկելու պահից:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կամ դատական կարգով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով սահմանված երկամսյա ժամկետում:

6. Սույն որոշմամբ նշանակված տուգանքը քաղաքացի՝ Օֆելյա Սեյրանի Սուլթանյանի կողմից պետք է վճարվի սույն որոշումը նրան հանձնելուց օրվանից

ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում, իսկ այդ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ գանգատը կամ բողոքը առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում: Տուգանք նշանակելու մասին որոշման հարկադիր կատարումը իրականացվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի համաձայն:

X

Վ. Սամսոնյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<15>> դեկտեմբերի 2023 թվականի N 3164-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ << ՊԱՐԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ >> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԻԼԻ ՍԱՄՎԵԼԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ ՉՎՃԱՐՎՈՂ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 176-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Լիլի Սամվելի Գասպարյանի 2023 թվականի դեկտեմբերի 14-ի դիմումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

**1.** Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի << Պարարվեստի դպրոց >> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Լիլի Սամվելի Գասպարյանին տրամադրել չվճարվող արձակուրդ՝ 2023 թվականի դեկտեմբերի 25-ից:

**2.** Չվճարվող արձակուրդի տևողությունը 24 օր՝ 2023 թվականի դեկտեմբերի 25-ից մինչև 2024 թվականի հունվարի 17-ը ներառյալ:

**3.** Չվճարվող արձակուրդի ընթացքում Լիլի Սամվելի Գասպարյանի աշխատանքային պարտականությունների կատարումը վերապահել նույն կազմակերպության ուսմասվար Մարինե Արշակի Խաչատրյանին:

**4.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Լիլի Սամվելի Գասպարյանին և Մարինե Արշակի Խաչատրյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

X **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» դեկտեմբերի 2023 **թվականի** N3163-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 10-Ի N 445-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետով, 3-րդ կետով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2022 թվականի մարտի 10-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդները կազմակերպելու համար աճուրդային հանձնաժողով ստեղծելու, դրա անհատական կազմը հաստատելու և աճուրդավար ու արձանագրող նշանակելու մասին» N 445-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 1-ին կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«1.Հայաստանի Հանրապետության ,Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդները կազմակերպելու համար ստեղծել աճուրդային հանձնաժողով՝ հետևյալ անհատական կազմով՝

1) Հենրիկ Գասպարյան – Գյումրի համայնքի գլխավոր ճարտարապետ,
2) Սերգեյ Մուրադյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի գլխավոր մասնագետ,
3) Արմենուհի Չախոյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար,
4) Տիգրան Հովհաննիսյան – Գյումրի համայնքի ավագանու անդամ,
5) Կարեն Մալխասյան - Գյումրի համայնքի ավագանու անդամ,
6) Քնարիկ Հարությունյան - Գյումրի համայնքի ավագանու անդամ,
7) Կարեն Առոյան - Գյումրի համայնքի ավագանու անդամ,
8) Նարեկ Միրզոյան - Գյումրի համայնքի ավագանու անդամ,
9) Սահականուշ Գրիգորյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի գործավար:»

2) 2-րդ կետի 1-ին ենթակետի «Արթուր Պապիկյան» բառերը փոխարինել «Հենրիկ Գասպարյան» բառերով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում աճուրդային հանձնաժողովի անդամներին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

15.12.2023

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2023 թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» դեկտեմբերի 2023 **թվականի** N 3162-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 01-Ի N 2728-Ա, N 2729-Ա, N 2730-Ա ԵՎ N 2731-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի նոյեմբերի 01-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մազմանյան փողոցի N 207/2 հասցեի 0.18 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով պարիսպը, 6.2 քառակուսի մետր մակերեսով հողամասը քաղաքացի Էդգար Խաչիկի Կարապետյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» N 2728-Ա, «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մազմանյան փողոցի N 209/1 հասցեի 0.04 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով պարիսպը, 7.4 քառակուսի մետր մակերեսով հողամասը քաղաքացիներ Խաչիկ Սուրենի Կարապետյանին և Նելլի Սաշիկի Տալեոյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» N 2729-Ա, «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մազմանյան փողոցի N 207/1 հասցեի 0.8 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով պարիսպը, 0.8 քառակուսի մետր մակերեսով հողամասը քաղաքացի Էդգար Խաչիկի Կարապետյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» N 2730-Ա և «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մազմանյան փողոցի N 209/2 հասցեի 0.2 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով պարիսպը, 0.2 քառակուսի մետր մակերեսով հողամասը քաղաքացիներ Խաչիկ Սուրենի Կարապետյանին և Նելլի Սաշիկի Տալեոյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» N 2731-Ա որոշումների մեջ փոփոխություն կատարելու անհրաժեշտություն է առաջացել գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի նոյեմբերի 01-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մազմանյան փողոցի N 207/2 հասցեի 0.18 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով պարիսպը, 6.2 քառակուսի մետր մակերեսով հողամասը քաղաքացի Էդգար Խաչիկի Կարապետյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» N 2728-Ա, «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մազմանյան փողոցի N 209/1 հասցեի 0.04 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով պարիսպը, 7.4 քառակուսի մետր մակերեսով հողամասը քաղաքացիներ Խաչիկ Սուրենի Կարապետյանին և Նելլի Սաշիկի Տալեոյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» N 2729-Ա, «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մազմանյան փողոցի N 207/1 հասցեի 0.8 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով պարիսպը, 0.8 քառակուսի մետր մակերեսով հողամասը քաղաքացի Էդգար Խաչիկի Կարապետյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» N 2730-Ա և «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մազմանյան փողոցի N 209/2 հասցեի 0.2 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով պարիսպը, 0.2 քառակուսի մետր մակերեսով հողամասը քաղաքացիներ Խաչիկ Սուրենի Կարապետյանին և Նելլի Սաշիկի Տալեոյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» N 2731-Ա որոշումների մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝
   1) Նախաբանի 2-րդ պարբերությունում «208» թիվը փոխարինել «207» թվով:

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ — Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2023թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» դեկտեմբերի 2023 **թվականի** N 3161-Ա

**«ԼԱՌ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՐՄԵՆ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ 68 ՀԱՍՑԵՈՒՄ ՀԵՂՈՒԿԱՑՎԱԾ ԳԱԶԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքում «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքով նախատեսված թույլտվությունների տրամադրման կարգերը սահմանելու մասին»» № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով «ԼԱՌ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Արմեն Մուրադյանի (ՀՎՀՀ՝ 05801117, գրանցման ամսաթիվ՝ 09.08.1994 թ.) 2023 թվականի նոյեմբերի 23-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի նոյեմբերի 23-ին 25299-2023 թվագրմամբ)՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Թույլատրել «ԼԱՌ» ՍՊԸ տնօրեն Արմեն Մուրադյանին Գյումրի քաղաքի Մ. Խորենացի 68 հասցեում իրականացնել հեղուկացված գազի վաճառք:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2023 թ. դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ԼԱՌ» ՍՊԸ տնօրեն Արմեն Մուրադյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

x

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2023թ. ք. Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

«15» դեկտեմբերի 2023 թվականի N3160-Ա

## «ԼԱՌ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՐՄԵՆ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ 68 ՀԱՍՑԵՈՒՄ ՀԵՂՈՒԿ ՎԱՌԵԼԻՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքում «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքով նախատեսված թույլտվությունների տրամադրման կարգերը սահմանելու մասին»» № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով «ԼԱՌ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Արմեն Մուրադյանի (ՀՎՀՀ՝ 05801117, գրանցման ամսաթիվ՝ 09.08.1994 թ.) 2023 թվականի նոյեմբերի 23-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի նոյեմբերի 23-ին 25302-2023 թվագրմամբ)՝

## Ո Ր Ո Շ Ու Մ Ե Մ.

1. Թույլատրել «ԼԱՌ» ՍՊԸ տնօրեն Արմեն Մուրադյանին Գյումրի քաղաքի Մ. Խորենացի 68 հասցեում իրականացնել հեղուկ վառելիքի վաճառք:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2023 թ. դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ԼԱՌ» ՍՊԸ տնօրեն Արմեն Մուրադյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

X

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2023թ. ք. Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am


## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» դեկտեմբերի 2023 **թվականի** N 9159-Ա

**«ԿԱՄՕՅԼ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԿԱՄՈ ՄԵԼՔՈՆՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՍՊԱՆԴԱՐՅԱՆ 37 ՀԱՍՑԵՈՒՄ ՀԵՂՈՒԿ ՎԱՌԵԼԻՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքում «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքով նախատեսված թույլտվությունների տրամադրման կարգերը սահմանելու մասին»» № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով ընկերության տնօրեն «Կամօյլ» ՍՊԸ տնօրեն Կամո Մելքոնյանի (ՀՎՀՀ՝ 03523673, գրանցման ամսաթիվ՝ 11.06.2002 թ.) 2023 թվականի նոյեմբերի 23-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի նոյեմբերի 23-ին 25300-2023 թվագրմամբ)՝

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Թույլատրել ընդունելով «Կամօյլ» ՍՊԸ տնօրեն Կամո Մելքոնյանին Գյումրի քաղաքի Սպանդարյան 37 հասցեում իրականացնել հեղուկ վառելիքի վաճառք:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2023թ. դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունելով ընդունելով «Կամօյլ» ՍՊԸ տնօրեն Կամո Մելքոնյանին պատշաճ իրազեկմանը հաջորդող օրվանից:

X

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2023թ. ք. Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» դեկտեմբերի 2023 **թվականի** N3158-Ա

**«ԼԱՌ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՐՄԵՆ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ 46Ա ՀԱՍՑԵՈՒՄ ՀԵՂՈՒԿ ՎԱՌԵԼԻՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքում «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքով նախատեսված թույլտվությունների տրամադրման կարգերը սահմանելու մասին»» № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով «ԼԱՌ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Արմեն Մուրադյանի (ՀՎՀՀ՝ 05801117, գրանցման ամսաթիվ՝ 09.08.1994 թ.) 2023 թվականի նոյեմբերի 23-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի նոյեմբերի 23-ին 25303-2023 թվագրմամբ)՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Թույլատրել «ԼԱՌ» ՍՊԸ տնօրեն Արմեն Մուրադյանին Գյումրի քաղաքի Խ. Հայրիկ 46ա հասցեում իրականացնել հեղուկ վառելիքի վաճառք:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2023 թ. դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ԼԱՌ» ՍՊԸ տնօրեն Արմեն Մուրադյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

x

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2023թ. ք. Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## Ո Ր Ո Շ Ու Մ

«15» [illegible] 2023 թվականի N 3157-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 19-Ի N 2019-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 1732-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2016 թվականի հոկտեմբերի 24-ի <<Քաղաքացի Վյաչեսլավ Յուրիի Աֆրյանին պատկանող Գյումրի քաղաքի Շահումյան փողոց N 96 հասցեի բնակելի տան հողամասում ինքնակամ կառուցված 90,34 քառակուսի մետր ներքին մակերեսով շինություններն օրինական ճանաչելու և օրինական հողամասին կից ավել օգտագործվող 121,64 քառակուսի մետր մակերեսով հողամասի կարգավիճակի մասին>> N 1732-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն է առաջացել, չափագրության մեջ տեղ գտած սխալի պատճառով (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 08/08/2023 թվականի N Կ-08082023-08-0173 որոշում): Ներկայացվել է նոր ճշտգրված չափագրություն:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 3-րդ մասով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2016 թվականի հոկտեմբերի 24-ի <<Քաղաքացի Վյաչեսլավ Յուրիի Աֆրյանին պատկանող Գյումրի քաղաքի Շահումյան փողոց N 96 հասցեի բնակելի տան հողամասում ինքնակամ կառուցված 90,34 քառակուսի մետր ներքին մակերեսով շինություններն օրինական ճանաչելու և օրինական հողամասին կից ավել օգտագործվող 121,64 քառակուսի մետր մակերեսով հողամասի կարգավիճակի մասին>> N 1732-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) վերնագրում, նախաբանում և որոշման 1-ին կետում <<121,64(մեկ հարյուր քսանմեկ ամբողջ վաթսունչորս հարյուրերրորդական)>> թիվը և բառերը փոխարինել <<119,93(մեկ հարյուր տասնինն ամբողջ իննսուներեք հարյուրերրորդական)>> թվով և բառերով.
2) վերնագրում, նախաբանում, որոշման 2-րդ կետում <<90,34(իննսուն ամբողջ երեսունչորս հարյուրերրորդական)>> թիվը և բառերը փոխարինել <<56,22(հիսունվեց ամբողջ քսաներկու հարյուրերրորդական)>> թվով և բառերով .
3) որոշումը լրացնել $1^1$. կետով հետևյալ բովանդակությամբ.
4) <<$1^1$. Ճանաչել քաղաքացի Վյաչեսլավ Յուրիի Աֆրյանի (ծնված 1956 թվականի հունվարի 01-ին) և ընդհանուր բակի մյուս համասեփականատերերի սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Շահումյան փողոց N 96 հասցեի բնակելի տան օրինական հողամասին կից ավել օգտագործվող 301,39 (երեք հարյուր մեկ ամբողջ երեսունինն հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի նկատմամբ:>>.

2. Գյումրի համայնքի ղեկավարի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2016 թվականի հոկտեմբերի 24-ի N 1732-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> 2021 թվականի օգոստոսի 19-ի N 2019-Ա որոշումը ճանաչել ուժը կորցրած:

X [signature]

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ — Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի
2023 թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**«15» դեկտեմբերի 2023 թվականի N 3156 Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 2636-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի հոկտեմբերի 23-ի <<Քաղաքացի Բագրատ Գուրգենի Խաչատրյանին պատկանող Գյումրի քաղաքի Ջիվանու փողոց N 134 հասցեի բնակելի տան ինքնակամ կառուցված 84,51 քառակուսի մետր մակերեսով շինությունների, ինքնակամ բացված 1(մեկ) պատուհանի օրինական ճանաչելու և օրինական հողամասին կից ավել օգտագործվող 15,7 քառակուսի մետր մակերեսով կարգավիճակի մասին>> N 2636-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու անհրաժեշտություն է առաջացել, չափագրության մեջ տեղ գտած սխալի պատճառով (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 30/11/2023 թվական N Կ-30112023-08-0106 որոշում): Ներկայացվել է նոր ճշտգրտված չափագրություն:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի հոկտեմբերի 23-ի <<Քաղաքացի Բագրատ Գուրգենի Խաչատրյանին պատկանող Գյումրի քաղաքի Ջիվանու փողոց N 134 հասցեի բնակելի տան ինքնակամ կառուցված 84,51 քառակուսի մետր մակերեսով շինությունների, ինքնակամ բացված 1(մեկ) պատուհանի օրինական ճանաչելու և օրինական հողամասին կից ավել օգտագործվող 15,7 քառակուսի մետր մակերեսով կարգավիճակի մասին>> N 2636-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) վերնագում,նախաբանում,որոշման 2-րդ կետում <<84,51(ութսունչորս ամբողջ հիսունմեկ հարյուրերորդական) >> թիվը և բառը փոխարինել << 83,43(ութսուներեք ամբողջ քառասուներեք)>> թվով և բառով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ — Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի
2023 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-001; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

### ՔԱՂԱՔԱՑԻ ԿԱՐԻՆԵ ԳՎԻԴՈՆԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«15» «[illegible]» 2023 թվական N 3155 – Ա

### 1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար Վարդգես Սամսոնյանս 2023 թվականի դեկտեմբերի 13 -ին ժամը 11:30-ին Գյումրի քաղաքում, համայնքապետարանի վարչական շենքում <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> ենթակետի հիմքով հարուցված և իրականացված դռնբաց վարչական վարույթի ընթացքում, քաղաքացի Կարինե Գվիդոնի Մուրադյանի ( հասցե՝ ք.Գյումրի, Անտառավան 3 թղմ., 55/1 ) բացակայությամբ, գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները պարզեցի.

### 2. ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ

Քաղաքացի՝ Կարինե Գվիդոնի Մուրադյանի անշարժ գույքի հարկի պարտավորությունները Գյումրի համայնքի բյուջեի նկատմամբ առաջացել է անշարժ գույքի 2012-2020թթ. չվճարված հարկից (հիմք՝ AE 0469239, ՀԾՀ՝ 5310650133 ՀՀ Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի բյուջեի եկամուտների հավաքագրման բաժնի կողմից տրամադրված N 296823602215164946, N 796735972604165021 տեղեկանքը) :

Վճարման ենթակա գումարը 27.04.2023 թվականի դրությամբ կազմել է անշարժ գույքի հարկի գծով ընդամենը՝ 26.076 ( քսանվեց հազար յոթանասունվեց ) , 15.211 ( տասնհինգ հազար երկու հարյուր տասնմեկ ) ՀՀ դրամ գումար:

## 3. ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Համաձայն՝ հարկային օրենսգրքի՝ (այսուհետ՝ Օրենսգիրք) 224-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի համար սույն բաժնով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեությունից

Օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հարկ վճարողներ են համարվում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք, բացառությամբ պետական մարմինների, համայնքային կառավարչական հիմնարկների, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների, ինչպես նաև բազմաբնակարան բնակելի շենքի բնակարանների, ոչ բնակելի տարածքների, բազմաբնակարան բնակելի շենքում տեղակայված՝ հասարակական, արտադրական նշանակության շինությունների, ավտոտնակների (ավտոկայանատեղիների, ավտոհանգրվանների) սեփականատերերին՝ բազմաբնակարան բնակելի շենքի սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ (այդ թվում՝ շենքի տակ գտնվող)՝ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող հողամասի և ընդհանուր օգտագործման տարածքների մասով:

Օրենսգրքի 226-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի <<բ>> ենթակետի համաձայն՝ Օրենսգրքի 46-րդ հոդվածի 6-րդ մասի՝ հարկային պարտավորությունը Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված վերջնաժամկետներում չկատարվելու կամ մասնակի կատարվելու դեպքում հարկային մարմինը, իսկ տեղական հարկերի ու տեղական վճարների մասով՝ տեղական ինքնակառավարման մարմինը իրավասու են Օրենսգրքի 19-րդ բաժնով սահմանված կարգով ձեռնարկել հարկային պարտավորությունների կատարումն ապահովող միջոցներ: <<Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն, համայնքի ղեկավարը ֆինանսների բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները.

4)տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարվող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

## 4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Նկատի ունենալով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենսգրքի 46-րդ հոդվածի 6-րդ մասի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 28–րդ հոդվածի 1–ին, 4–րդ մասերի, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ**

1. Քաղաքացի ՝ Կարինե Գվիդոնի Մուրադյանից հօգուտ՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի գանձել՝ 26.076 ( քսանվեց հազար յոթանասունվեց ) , 15.211 ( տասնհինգ հազար երկու հարյուր տասնմեկ ) ՀՀ դրամ գումար:
2. Քաղաքացի՝ Կարինե Գվիդոնի Մուրադյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Կարինե Գվիդոնի Մուրադյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
4. Սույն որոշումը <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով ենթակա է հարկադիր կատարման՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

13.12.2023

X

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-001; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ
## ՔԱՂԱՔԱՑԻ ՄԱՌԻ ԴԱՎԹԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**«15»«դեկտեմբերի» 2023 թվական N 3154 – Ա**

### 1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար Վարդգես Սամսոնյանս 2023 թվականի դեկտեմբերի 12 -ին ժամը 11:40-ին Գյումրի քաղաքում, համայնքապետարանի վարչական շենքում <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> ենթակետի հիմքով հարուցված և իրականացված դռնբաց վարչական վարույթի ընթացքում, քաղաքացի Մառի Դավթի Հովհաննիսյանի ( հասցե՝ ք.Գյումրի, Սունդուկյան փ., 262 շենք ) բացակայությամբ, գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները պարզեցի.

### 2. ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ

Քաղաքացի՝ Մառի Դավթի Հովհաննիսյանի անշարժ գույքի հարկի պարտավորությունները Գյումրի համայնքի բյուջեի նկատմամբ առաջացել է անշարժ գույքի 2016-2020թթ. չվճարված հարկից (հիմք՝ AS 0232707, ՀԾՀ՝ 6602910442 ՀՀ Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի բյուջեի եկամուտների հավաքագրման բաժնի կողմից տրամադրված N 296841747948133449, N 796754120075133521 տեղեկանքը) :

Վճարման ենթակա գումարը 23.11.2023 թվականի դրությամբ կազմել է անշարժ գույքի հարկի գծով ընդամենը՝ 22.512 ( քսաներկու հազար հինգ հարյուր տասներկու ), 6031 ( վեց հազար երեսունմեկ) , 10.665 ( տասը հազար վեց հարյուր վաթսունհինգ) ՀՀ դրամ գումար:

## 3. ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Համաձայն՝ հարկային օրենսգրքի՝ (այսուհետ՝ Օրենսգիրք) 224-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի համար սույն բաժնով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեությունից

Օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հարկ վճարողներ են համարվում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք, բացառությամբ պետական մարմինների, համայնքային կառավարչական հիմնարկների, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների, ինչպես նաև բազմաբնակարան բնակելի շենքի բնակարանների, ոչ բնակելի տարածքների, բազմաբնակարան բնակելի շենքում տեղակայված՝ հասարակական, արտադրական նշանակության շինությունների, ավտոտնակների (ավտոկայանատեղիների, ավտոհանգրվանների) սեփականատերերին՝ բազմաբնակարան բնակելի շենքի սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ (այդ թվում՝ շենքի տակ գտնվող)՝ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող հողամասի և ընդհանուր օգտագործման տարածքների մասով:

Օրենսգրքի 226-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի <<բ>> ենթակետի համաձայն՝ Օրենսգրքի 46-րդ հոդվածի 6-րդ մասի՝ հարկային պարտավորությունը Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված վերջնաժամկետներում չկատարվելու կամ մասնակի կատարվելու դեպքում հարկային մարմինը, իսկ տեղական հարկերի ու տեղական վճարների մասով՝ տեղական ինքնակառավարման մարմինը իրավասու են Օրենսգրքի 19-րդ բաժնով սահմանված կարգով ձեռնարկել հարկային պարտավորությունների կատարումն ապահովող միջոցներ: <<Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն, համայնքի ղեկավարը ֆինանսների բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները.

4)տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարվող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

## 4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Նկատի ունենալով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենսգրքի 46-րդ հոդվածի 6-րդ մասի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 28–րդ հոդվածի 1–ին, 4–րդ մասերի, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

## Ո Ր Ո Շ Ու Մ ԵՄ

1. Քաղաքացի ՝ Մառի Դավթի Հովհաննիսյանից հօգուտ՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի գանձել՝ 22.512 ( քսաներկու հազար հինգ հարյուր տասներկու ) , 6031 ( վեց հազար երեսունմեկ) , 10.665 ( տասը հազար վեց հարյուր վաթսունհինգ) ՀՀ դրամ գումար:
2. Քաղաքացի՝ Մառի Դավթի Հովհաննիսյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Մառի Դավթի Հովհաննիսյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
4. Սույն որոշումը <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով ենթակա է հարկադիր կատարման՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-001; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

### ՔԱՂԱՔԱՑԻ ՇԱԼԻԿՈ ԵՎ ԱՆԱՀԻՏ ՍԱՐԳՍՅԱՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«15» «դեկտեմբերի» 2023 թվական N 3153 – Ա

### 1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար Վարդգես Սամսոնյանս 2023 թվականի դեկտեմբերի 12 -ին ժամը 11:20-ին Գյումրի քաղաքում, համայնքապետարանի վարչական շենքում <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> ենթակետի հիմքով հարուցված և իրականացված դռնբաց վարչական վարույթի ընթացքում, քաղաքացի՝ Շալիկո և Անահիտ Սարգսյանների ( հասցե՝ ք.Գյումրի, Շիրվանզադեի փ., տ.36 ) բացակայությամբ, գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները պարզեցի.

### 2. ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ

Քաղաքացի՝ Շալիկո և Անահիտ Սարգսյանների անշարժ գույքի հարկի պարտավորությունները Գյումրի համայնքի բյուջեի նկատմամբ առաջացել է անշարժ գույքի 2019-2020թթ. չվճարված հարկից (հիմք՝ AH 0341165, ՀԾՀ՝ 1807900721, AN 0600246, ՀԾՀ՝ 6614670387 ՀՀ Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի բյուջեի եկամուտների հավաքագրման բաժնի կողմից տրամադրված N796754132715143122, N 796754132776143224 տեղեկանքը):

Վճարման ենթակա գումարը 23.11.2023 թվականի դրությամբ կազմել է անշարժ գույքի հարկի գծով ընդամենը՝ 21.173 ( քսանմեկ հազար մեկ հարյուր յոթանասուն երեք ) և 5424 ( հինգ հազար չորս հարյուր քսանչորս ) ՀՀ դրամ գումար:

## 3. ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Համաձայն՝ հարկային օրենսգրքի՝ (այսուհետ՝ Օրենսգիրք) 224-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի համար սույն բաժնով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեությունից

Օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հարկ վճարողներ են համարվում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք, բացառությամբ պետական մարմինների, համայնքային կառավարչական հիմնարկների, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների, ինչպես նաև բազմաբնակարան բնակելի շենքի բնակարանների, ոչ բնակելի տարածքների, բազմաբնակարան բնակելի շենքում տեղակայված՝ հասարակական, արտադրական նշանակության շինությունների, ավտոտնակների (ավտոկայանատեղիների, ավտոհանգրվանների) սեփականատերերին՝ բազմաբնակարան բնակելի շենքի սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ (այդ թվում՝ շենքի տակ գտնվող)՝ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող հողամասի և ընդհանուր օգտագործման տարածքների մասով:

Օրենսգրքի 226-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի <<բ>> ենթակետի համաձայն՝ Օրենսգրքի 46-րդ հոդվածի 6-րդ մասի՝ հարկային պարտավորությունը Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված վերջնաժամկետներում չկատարվելու կամ մասնակի կատարվելու դեպքում հարկային մարմինը, իսկ տեղական հարկերի ու տեղական վճարների մասով՝ տեղական ինքնակառավարման մարմինը իրավասու են Օրենսգրքի 19-րդ բաժնով սահմանված կարգով ձեռնարկել հարկային պարտավորությունների կատարումն ապահովող միջոցներ: <<Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն, համայնքի ղեկավարը ֆինանսների բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները.

4)տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարվող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

## 4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Նկատի ունենալով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենսգրքի 46-րդ հոդվածի 6-րդ մասի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 28–րդ հոդվածի 1–ին, 4–րդ մասերի, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ

1. Քաղաքացի ՝ Շալիկո և Անահիտ Սարգսյաններից հօգուտ՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի գանձել՝ 21.173 ( քսանմեկ հազար մեկ հարյուր յոթանասուներեք ) և 5424 ( հինգ հազար չորս հարյուր քսանչորս ) ՀՀ դրամ գումար:
2. Քաղաքացի՝ Շալիկո և Անահիտ Սարգսյաններին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Շալիկո և Անահիտ Սարգսյաններին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
4. Սույն որոշումը <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով ենթակա է հարկադիր կատարման՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

13.12.2023

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ